



Ագդարարության Trumpet's Sound փող

53-րդ ՏԱՐԻ, ԱՄՏՐԱԼԻԱ
ՅՈՒՆՈՒՆ - ՓԵՏՐՈՒՆ

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՓՈՂ»
Երկամսյա հոգեւոր թերթ

Պատասխանատու խմբագիր՝
հովիւ Հրաչ Գույումեան

ACM AUSTRALIA
PO BOX 1593,
CHATSWOOD NSW 2057
EMAIL: hkiujian@acmaust.org
URL: www.acmaust.org



Բովանդակութիւն

Միայն ԱՆ կարող է զիս նոր ընել 3
Հովիւ Հրաչ Գույումեան

Եզիպտոսէն Քանան (3) 4
Տոն Սրորմըր

Երբ Աստուած անարդար կը թուայ 8
Ռէքս Տիրլափ

«Ես անոր վրայ յանցանք
մը չեմ գտներ» 11
Նէյլ Պուրման

Ծառայութեան քաց դռներ 14
Անժէլայ Յարութիւնեան

Կազմի նկարը՝ Հայկական գիւղի տեսարան,
ACM, Ապրիլ 2019թ.:

- Փառք կուտանք Տէրոջը անցեալի համար եւ շնորհակալութիւն կը յայտնենք Իրեն Նոր տարուայ համար:
- Շնորհակալութիւն կը յայտնենք Անոր պաշտպանութեան եւ դաշտին մէջ մեր ծառայակիցներուն առաջնորդելու համար:
- Կը խնդրենք աղօթել այն բոլոր մանուկներու եւ պատանիներու համար, ովքեր Սուրբ Ծննդեան եւ Նոր տարուայ շրջանին լսեցին Աւետարանի պատգամը:
- Աղօթեցէ՛ք Հայաստանի խաղաղութեան համար:
- Աղօթեցէ՛ք մեր խնամքի տակ գտնուող բազմաթիւ կարիքաւոր ընտանիքներու, երիտասարդներու եւ ուսանողներու համար:
- Աղօթեցէ՛ք դէպի Հայաստան ուղարկուող 24-րդ բեռնարկի համար:
- Աղօթեցէ՛ք, որ Տէրը օգնէ մեզ Երեւանի մէջ համապատասխան շէնք գնելու համար, որը պիտի ծառայէ, որպէս ACM-ի գրասենեակ:

Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:

Միայն Ան կարող է զիս նոր ընել

Մենք բոլորս կը սիրենք նորը: 2022 թ.-ին մեծ ակնկալիքով կը նայինք: «Նոր» բառը հաճելի է մեր ականջներուն՝ նոր տուն, նոր ինքնաշարժ, նոր կօշիկներ..., իսկ ի՞նչ կ'ըսես քու մասիդ: Եկէ՛ք անձնականացնենք: Ինչպիսի՞ն է այսօր իմ վերաբերմունքս, մտքերս, գործերս: Ո՞վ կրնայ զիս փոխել ու նոր դարձնել:

23-րդ Սաղմոսի մէջ Դաւիթ թագաւորը կը խօսի այն մասին, թէ ինչպէս Աստուած կը թարմացնէ ու կը վերականգնէ զինք: Ան կ'ըսէ. «Հոգիս կը նորոգէ» (հմր 3-5): Հայերէն թարգմանութեան մէջ գեղեցիկ ըստուած է՝ «... կը նորոգէ»:

Երբեմն կեանքը այնպիսի անակնկալներ կը մատուցանէ մեզ, որ կը սկսինք մտածել, թէ ի վիճակի չենք ճանապարհը շարունակելու: Մեր կատարած սխալ գործերու պատճառով մենք մեզի յանցաւոր կը զգանք: Երբեմն կ'ատենք մեր ով ըլլալը՝ մեր եսասիրութիւնը, ազահութիւնը ու հպարտութիւնը: Սա մեզ ատելութեամբ կը լեցնէ: Ո՞վ կրնայ օգնել, ո՞վ կրնայ փոխել մեզ, ո՞վ կրնայ ուղղել մեզ եւ նորը դարձնել:

Աստուածաշունչը կը խօսի բրուտի ու անոր ձեռքերու մասին: Գուցէ փորձած էք ձեր լաւագոյնը ընել, ձեր ունեցած ամէն ինչ տուած էք, բայց արդիւնք չէք ունեցած: Ձեր անօթը ձեր ուզածին պէս ձեւ չստացաւ: Արդեօք այն երբեւէ վստահա՞ծ էք Բրուտին: Արդեօք Յիսուսին յանձնա՞ծ էք ըսելով. «Ահա ես, ձեւաւորե՛ զիս եւ դարձո՛ւր այն տղամարդը կամ կինը, որը Դուն կ'ուզես տեսնել»:

Դաւիթը պարզապէս բանաստեղծութիւն կամ երգ չգրեց: Ան մեզի կը պատմէ, որ միայն Աստուած կրնայ նորոգել կոտրուած սիրտը ու այն նոր դարձնել:

2022 թ.-ի շեմին դուն նոյնպէս կրնաս Զրիստոսին յանձնուիլ: Միայն Ան կրնայ փոխել քեզ ու նորը դարձնել:

Այս Նոր տարուայ մէջ բոլորիդ երջանկութիւն եւ օրհնութիւն կը մաղթենք Զրիստոսով:

Հ. Գ.

Եգիպտոսէն Քանան (3)

Աստուած Իր Անձը կը բացայայտէ Մովսէսին (մաս 1)

Ինչպէ՞ս Աստուած Իր Անձը կը բացայայտէ: Այս հարցումին էութիւնը ոչ թէ յայտնութեան ձեւի մէջ է այլ՝ բովանդակութեան: Աստուծոյ յայտնութիւնը Մովսէսին որոշ կարեւոր սկզբունքներ կը սորվեցնեն մեզի: Նախ՝ կարեւոր է գիտակցիլ, որ Աստուած սուրբ Աստուած է. ասիկա կը նշանակէ, որ այն վայրը, որտեղ Ան կը գտնուի նոյնպէս սուրբ է: Վայրը, որտեղ Աստուած Իր Անձը բացայայտելու համար կ'ընտրէ պէտք է սուրբ համարուի: Կօշիկները հանելու պատուէրն ստանալով Մովսէսը հասկցաւ, որ այդ վայրը սուրբ է:

Տէրը Մովսէսին յայտնուեցաւ, որպէս իր հօր Աստուածը, ինչպէս նաեւ որպէս Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը: Այն, որ Աստուած բառն օգտագործուած է եզակի եղանակով («Ես եմ քու հօրդ Աստուածը») կը նշանակէ, որ Ամբամբը հաւատարիմ էր Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուծոյն:

Հետաքրքրական է, թէ ինչպէս Աստուած յայտնեց Իր Անձը Մովսէսին: Նախ՝ կը կարդանք, որ Տէրոջը հրեշտակը կրակի բոցով յայտնուեցաւ մօրենիին մէջ: Երբ Մովսէսը դարձաւ, որ տեսնէ այդ տեսարանը, Տէրը՝ Եհովան խօսեցաւ: Ան Իր Անձը նկարագրեց, որպէս Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը՝ Էլրիմը: Շատ անգամ, եթէ ոչ միշտ, «Տէրոջը հրեշտակը» արտայայտութիւնը կը վերաբերի Երրորդութեան երկրորդ Անձին՝ մեր Տէր Յիսուսին:

Աստուած Աբրահամի հետ ուխտ ըրած էր եւ այն նորոգած էր Իսահակի ու Յակոբի հետ: Ասիկա անպայմանական խոստում էր, որ այն երկիրը, որու վրայ Աբրահամ կ'ապրէր որպէս պանդուխտ եւ օտարական՝ իր սերունդին պիտի տրուէր:

Աստուած ըսաւ, թէ տեղեակ է այն ամէնէն, ինչ կը կատարուէր Եգիպտոսի մէջ, ներառեալ իսրայէլցիներու տառապանքները: Ան տեսած ու լսած էր անոնց հառաչանքը եւ գիտէր, որ անոնց տառապանքը անարդար էր: Տէրը նաեւ յայտնեց, որ յիշեց Աբրահամին տուած Իր խոստումը: Հասունացած էր այն ժամանակը, որ Ան Քանանի եր-

կիրը պէտք է Աբրահամի սերունդին տար:

Աստուած ծրագրած էր այդ ընել մէկ մարդու՝ Մովսէսի միջոցով: Երբ ժամանակը գայ, որ Աստուած սկսի Իր ծրագրածը կատարել, Ան իր ընտրած մարդուն կը պատրաստէ այդ աշխատանքին համար: Ասիկա ճշմարիտ էր Նէեմիայի ժամանակ, ճշմարիտ էր նաեւ, երբ Տէրն ընտրեց Պօղոսին, որպէս հեթանոսներու առաքեալ: Մովսէսի խնդիրն այն էր, որ ան առաջ քաշեց ամէն տեսակի պատրուակ, որպէսզի չկատարէ այն, ինչ Տէրը կը կանչէր զինք ընելու:

Մովսէսը եւ իր արդարացումները

Մովսէսը չորս արդարացումներ առաջ քաշեց՝ փորձելով խուսափել ընելու այն, ինչ Աստուած կը կանչէր զինք: Ան պնդեց իր անկարողութիւնը. «Ես ո՞վ եմ»: Ան մտածեց, թէ իսրայելցիները պիտի հարցնեն զինք, թէ ո՞վ որկեց զինք եւ ի՞նչ է այս Աստուծոյ անունը: «Ի՞նչ է Անոր անունը»: Ան կ'ուզէր հասկցնել, որ իրեն ոչ ոք պիտի չհաւատար: Ան պնդեց իր անկարողութիւնը, որպէս հրապարակախօս. «Ես ճարտարախօս չեմ»:

Վերջապէս ան անդրադարձաւ իր իրական խնդրին ու խնդրեց Տէրոջը ուղարկել մէկ ուրիշին: Եթէ մարդը չ'ուզէր կատարել Տէրոջ գործը, ապա հնարատրինս ամէն բան պիտի ընէ ու խելամիտ պատճառներ ներկայացնէ՝ խուսափելու ընելու այն, ինչ Աստուած նախատեսած էր իր համար:

Առաջին արդարացումը. «Ես ո՞վ եմ»

Այս հարցը կ'ենթադրէ, թէ Մովսէսը կարողութիւն չունեցող անձ մըն էր եւ ի վիճակի չէր կատարելու իրեն յանձնարարուած առաջադրանքը: Շատերուս համար ասիկա կրնայ լաւ կեցուածք հանդիսանալ, քանի որ մենք պէտք չէ մեր մասին աւելի բարձր մտածենք, քան կանք: Մեզ պէտք է ճշմարիտ գնահատական, թէ ինչ կրնանք ընել:

Սակայն Մովսէսի պարագային սա ոչ թէ պատճառ էր, որ չկատարէ այն, ինչ Աստուած իրեն պատուիրած էր, այլ՝ արդարացում: Աստուած գիտեր, որ Մովսէսը կարողութեան պակաս ունի, եւ իրեն տուաւ անհրաժեշտ միակ երաշխիքը. Աստուած իր հետ պիտի ըլլար: Աստուած ամէն ինչ գիտեր Մովսէսի կարողութեան մասին եւ համբերա-

տար վստահեցուց զինք, որ Ան իր հետ պիտի ըլլար: Ասկէ աւելի մարդը ի՞նչ կրնայ խնդրել, քան Աստուծոյ ներկայութեան հաւաստիացումը:

Այս ամէնուն մէջ Մովսէսը պէտք է հաւատքով գործեր: Աստուած Մովսէսին տուաւ Իր ներկայութեան նշանը: Տէրոջը նշանն այն էր, որ երբ Մովսէսը աւարտեր իր սկզբնական առաջադրանքը՝ իսրայելցիներուն Եգիպտոսէն դուրս հանելը, անոնք Տէրոջը պիտի երկրպագեն այդ վայրին մէջ: Ասիկա բաւական պիտի ըլլար Մովսէսի համար՝ Տէրոջը հնազանդուելով առաջ ընթանալու համար:

Մենք ինչպէ՞ս կ'արձագանքենք մեզ հետ ըլլալու Աստուծոյ խոստմանը: Կարելոք է յիշել, որ երբ Աստուած խոստում կուտայ Ան նաեւ կը կատարէ այն: Իր տուած խոստումներն ոչ մէկը չէ ձախողուած, ոչ ալ պիտի ձախողուի:

Երկրորդ արդարացումը. «Ի՞նչ է Անոր անունը»

Մովսէսի երկրորդ արդարացումը հիմնուած էր այն ենթադրեալ կասկածի վրայ, որ իսրայելցիները չէին գիտեր իրենց Աստուծոյ անունը: Ինչպէ՞ս պիտի կրնար երթալ իր ժողովուրդին ու ըսեր, որ իրենց հայրերուն Աստուածը խօսուցած է իր հետ: Մի՞թէ Իսրայելը մոռցած էր Աբրահամի Աստուծոյն:

Ասիկա դեռեւս կը վկայէ այն բանի մասին, որ իսրայելցիները որոշ չափով ազդուած էին իրենց շրջապատող կռապաշտութեամբ: Սովորաբար ընդունուած է, որ այն աստուածները, որոնց ազգը կը պաշտէ, հզօր են իրենց երկրին մէջ, իսկ դրացի երկիրներուն մէջ կ'իշխեն այլ աստուածներ: Այն, որ կռապաշտութիւնը իսրայելցիներուն կեանքին մէջ խնդիր դարձած էր ակնյայտ դարձաւ Սինա լեռան վրայ, երբ ժողովուրդը Ահարոնին խնդրեց աստուածներ պատրաստել իրենց համար, քանի որ չէին գիտեր, թէ Մովսէսի հետ ինչ եղած էր:

Աստուած Իր շնորհքով պատասխանեց Մովսէսին ու յայտնեց Իր անունը՝ ըսելով. «ԵՄ ԵՄ ՈՐ ԷՆ»: Ասիկա ուխտ պահող յաւիտենական Աստուծոյ անունն է: Այն կ'ընդգծէ Աստուծոյ յաւիտենական էութիւնը: Ան միշտ գոյ է: Ան կար, կայ եւ միշտ պիտի ըլլայ: Որպէս ԵՄ ԵՄ, Աստուած միշտ ներկայ է:

Աստուած նաեւ Ինքն Իրեն կոչեց, որպէս «Ձեր հայրերուն Աստուա-

ծը»: Ան Աբրահամի Աստուածն է, Իսահակի Աստուածն է եւ Յակոբի Աստուածն է: Ասիկա Ամենակարողի համար ժամանակաւոր անուն չէր. սա Աստուծոյ անունն էր յաիտեան եւ այն անունն է, որով Ան կը յիշուի սերունդէ սերունդ: Ասիկա կը նշանակէ, որ Աստուած միշտ պիտի ճանչցուի, որպէս Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուած, եւ հետեւաբար, Ան պիտի ըլլայ Իր ժողովուրդի Աստուածը բոլոր սերունդներուն համար: Ան յաիտեանական ուխտ պահող եւ անփոփոխ Աստուած է:

Աստուած տեղեկութիւն տրամադրեց Մովսէսին ուղղուած Իր պատգամին մէջ՝ մանրամասնելով Աբրահամին՝ երկիրը իր սերունդին տալու ուխտի տարբեր կողմերը: Աստուծոյ այս պատգամը կը նշանակէ, որ Ան մտադիր էր շարունակելու հոգ տանել իսրայէլցիներուն՝ որպէս իր յատուկ ժողովուրդը: Ան Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի հետ ուխտ ըրած էր, եւ եկած էր այն պահը, որ կատարէր Աբրահամի սերունդներուն երկիրը տալու խոստումը:

Այնուհետեւ Աստուած Մովսէսին յայտնեց այն աշխատանքը, որը Ան մտադիր էր ընել: Մովսէսը պէտք է երթար ժողովուրդի երէցներուն քով այն պատգամով, որ անոնց հայրերուն Աստուածը յստակ գիտէր, թէ ինչ կը կատարուի Իր ժողովուրդի հետ, եւ որ Ան պիտի ազատէ անոնց տառապանքի գերութենէն եւ տանի քանանացիներուն երկիրը: Անոնք պէտք է փարաւոնին երթային խնդրելով, որ իրենց թոյլ տար 3 օրուայ ճամբայ կտրել ու հասնիլ անապատ, որպէսզի կարողանան զոհ մատուցել իրենց Տէր Աստուծոյն:

Աստուած գիտէր, որ փարաւոնը յօժար կամքով թոյլ պիտի չտար, որ ժողովուրդը հեռանար իր երկրէն, եւ հաւանաբար սա էր պատճառը, որ ժողովուրդը պէտք էր երեք օրուայ ճամբայ կտրէր դէպի անապատ: Բանի որ փարաւոնը ժողովուրդին արձակելու նպատակ չունէր, Աստուած յայտարարեց, որ Իր հրաշքները պիտի կատարէ Եգիպտոսի մէջ, եւ անկէ յետոյ փարաւոնը ազատ պիտի արձակէ անոնց: Այս հրաշքները անկասկած պիտի փաստեն, որ Եհովան միակ ճշմարիտ Աստուածն է:

Ժողովուրդը Եգիպտոսէն դատարկածեռն պէտք չէ հեռանար: Անոնք պէտք է խնդրէին եւ իրենց խնդրածը պիտի տրուէր՝ ոսկեայ զարդեր եւ հագուստ:

Երբ Աստուած անարդար կը թուայ

Գործք Առաքելոց 12

Տարիներ առաջ նոյն եկեղեցիէն երկու երիտասարդ ընտանիքներ օրհնուեցան գեղեցիկ փոքրիկի մը ծնունդով: Փոքրիկները մի քանի շաբթուայ տարբերութեամբ ծնած էին, սակայն տարօրինակն այն էր, որ երկուքն ալ առողջական լուրջ խնդիրներ ունէին: «Palmerston North» հիւանդանոցի բժիշկները նրբանկատօրէն ծնողներէն մէկուն հաղորդեցին, որ հիւանդանոցի մէջ այդ արատով ոչ մէկ նորածին ողջ չէ մնացած: Այդ երեխայի ծնողները մտատանջուեցին ու աղօթեցին, բայց բժիշկը վերջապէս ստիպուած եղաւ անջատելու կենսապահովման սարքը: Սակայն այդ երեխան շարունակեց ապրիլ: Բժիշկները չկրցան հաւատալ ու ծնողներուն ըսին, որ այս վերականգնումը բժշկական բացատրութիւն չունի: Անոնք նկարագրեցին այդ, որպէս հրաշք: Ես գիտեմ, որ այս պատմութիւնը ճիշտ է, քանի որ այդ երեխան իմ զաւակս էր:

Իսկ միւս հիւանդ փոքրիկին հետ ի՞նչ եղաւ: Ծնողները եւ շատ ուրիշներ աղօթեցին, բայց այդ փոքրիկ երեխան մահացաւ: Կը խորհիմ, թէ կրնաք պատկերացնել այդ ժամանակ մեր եկեղեցիին մէջ ինչպիսի մտքեր առաջացան: Ինչո՞ւ Աստուած թոյլ կուտայ նման բաներ պատահին: Եթէ Ան կրնայ մէկի աղօթքը պատասխանել, ապա ինչո՞ւ միւսինը չի պատասխաներ: Արդեօ՞ք դժուար բան էր խնդրուածը:

Գործք Առաքելոց 12-րդ գլխուն մէջ կը կարդանք նման իրավիճակով պատմութիւն մը: Երկու բարեպաշտ մարդ չար թագաւոր Հերովդէտի կողմէն բանտը կը նետուին: Յակոբոսը կը գլխատուի, իսկ իր մտերիմ ընկեր Պետրոսը՝ հրեշտակի միջամտութեամբ հրաշքով կը փրկուի: Յակոբոսի կեանքը ակնթարթի մը մէջ մարաւ բռնակալ Հերովդէտ թագաւորի քաղաքական քմահաճոյքի պատճառով: Կը թուայ, թէ Յակոբոսի մահը Աւետարանի համար մղուող պայքարի մէջ մեծ արձագանք չունեցաւ, ինչպէս Ստեփանոսի նահատակութիւնը: Անոր կեանքը պարզապէս օգտագործուեցաւ մի քանի քաղաքական միատոր գնելու համար, որպէսզի Հերովդէտը հրեաներու հաւանութեանը արժանանայ:

Երբեմն մահը մեզ համար անիմաստ կը թուայ:

Արդեօ՞ք Աստուած իսկապէս բարի է:

Մտածէ՛ք Տօքթ. Փօլ Քարլսոնի պատմութեան մասին: Ան որպէս բժիշկ-միսիոնար կը ծառայէր այդ ժամանակուայ Պելճիքական Քոնկոյի մէջ: Այն ինչ այնտեղ ականատես եղաւ փոխեց իր ողջ կեանքը: Երբ վերադարձաւ իր տուն՝ Քալիֆորնիա, չկրցաւ մոռնալ այնտեղ գտնուող անյոյս ժողովուրդի վիճակը: Ան իր ընտանիքը իր հետ առնելով վերադարձաւ Ափրիկէ ու բուժկէտ մը բացաւ: Երկու տարի անց Տօքթ. Քարլսոնը յայտնուեցաւ Քոնկոյի արիւնալի պատերազմին մէջ: Այլ ամերիկացիներու հետ գերի բռնուեցաւ: Փախչելու միայն մէկ հնարատրութիւն կար: Եթէ կարողանային բարձր պատը բարձրանալ ու այն կողմ թռնել, ապա պիտի կրնային անվտանգ տեղ հասնիլ: Տօքթ. Քարլսոնը մագցեցաւ պատը ու հասաւ եզրին ու քիչ էր մնացած որ ազատութեան մէջ յայտնուէր, երբ փամփուշտ մը խոցեց իր մարմինը: Ան մահացաւ: Սա կարծես թէ անիմաստ սպանութիւնն մըն էր: Ինչո՞ւ ով Տէ՛ր, ինչո՞ւ շէտեցիր կրակողին, որ սխալ կրակէր: Նոյնիսկ փոքր միջատ մը անոր քթին վրայ բաւական էր փոխելու պատմութեան ելքը: Եւ այսպէս, աւարտեց բարի մարդու մը երկրային կեանքը՝ ետին թողնելով սիրած կինն ու երկու զաւակները: Անոր փափաքածը պարզապէս Ափրիկէի հիւանդ մարդկանց օգնելն էր:

Երբեմն Աստուած պարզապէս արդար չի թուար: Ինչպէ՞ս կը գնահատէք այս խօսքերը: Մէկը կը բժշկուի, միւսը կը մահանայ: Մէկը անհոգ ու հանգիստ կեանք կը վարէ, իսկ միւսը փորձութենէ փորձութիւն կ'անցնի ու երբեք հանգիստ կեանք չ'ունենար:

Մենք հակուած ենք հարցնելու. «Ինչո՞ւ Յակոբոսը գլխատուեցաւ, իսկ Պետրոսը փրկուեցաւ»: Բայց այստեղ «ինչո՞ւ» հարցին չենք անդրադառնար: Այս պատմութեան մէջ ներգրաւուած քրիստոնէականները արտասուեցին Յակոբոսի համար եւ ուրախացան Պետրոսի համար, բայց ինձի կը թուայ, թէ անոնք չտուին այն մեծ հարցերը, որոնք յաճախ մենք կուտանք Աստուծոյ մասին նման իրավիճակներէ անցնելու ժամանակ՝ մտածելով, թէ Աստուած անարդար կը թուայ: Կը խորհիմ, թէ անոնք ստրված էին տառապանքին մէկ այլ տեսանկյունէն նայիլ: Անոնք տառապանքը դիտարկեցին ոչ մեր նման: Կեանքի մեր ականկալիքներու ցանկին մէջ տառապանքն ու նեղութիւնը գոյութիւն

չունին: Մեր նպատակը երջանիկ ու լաւ զգալն է: Երջանկութեան ձրգ-տումը գրուած է Ամերիկեան սահմանադրութեան մէջ՝ որպէս բոլոր մարդկանց անօտարելի իրաւունք: Ասիկա կը նշանակէ, որ երբ տառապանքի կը հանդիպինք, մենք կը սկսինք եզրակացնել, որ ինչ-որ բան սխալ է: Սա կարող է ընդհանրապէս այդպէս չ'ըլլալ, ընդհակառակը՝ սա կարող է պարզապէս նշանակել, որ ամէն ինչ բնական ընթացքի մէջ է:

Երբ Աստուած անարդար կը թուայ

Երբ կը տեսնենք, որ մարդկանց կեանքերուն մէջ ողբերգութիւններ տեղի կ'ունենան, որոնք կը ստիպեն մեզ տրտնջել ու մտածել, որ Աստուած անարդար է, ուրեմն մեր սրտին մէջ իրականութեան մէջ կը մտածենք, թէ Աստուած պարտական է մեզ լաւ կեանք մը ապահովելու: Մենք յաճախ հակուած ենք Աստուծոյ գնահատելու մեր նպատակներուն հասնելու մէջ Իր ձեռքը մեկնելու եւ մեզ մեր նպատակին հասցնելու կարողութեամբ: Եթէ մեր նպատակը երջանիկ զգալն է, Աստուած կրնայ օգտակար ըլլալ: Ան կը ներէ մեզ մեր մեղքերը եւ մեզ կը խոստանայ Երկինքի մէջ տեղ ապահովել: Սա հրաշալի է, այն մեզ լաւ զգացում կը պարգեւէ, եւ մենք կը պատմենք այն մասին, թէ որքան բարի է Աստուած: Բայց երբ ինչ-որ ցաւալի կամ տխուր բան մը կը պատահի մեզի հետ, ճիշտ այդ ժամանակ է, որ փորձութիւնը կուգայ: Աստուած մեզ չ'օգնէր հասնելու մեր նպատակին՝ երջանիկ ըլլալուն, ուստի կը բողոքենք ու պահանջկոտ կը դառնանք: Մեր պահանջները հիմնուած են երկու շատ սխալ գաղափարներու վրայ. առաջին՝ մենք իրաւունք ունինք հասկնալու եւ երկրորդ՝ Աստուած պարտաւոր է բացատրութիւն տալու: Յորը Իր տառապանքներէն անցնելէ ետք երբեք բացատրութիւն չստացաւ: Ան միայն Աստուծոյ մեծութեան յայտնութիւնը ստացաւ: Ասիկա իր կեանքի բոլոր իրադարձութիւնները մէկ այլ հարթակի վրայ տեղափոխեց, որը իրեն դրոճեց իր տառապանքին բոլորովին այլ կերպով նայիլ:

«Երանի՛ սգաւորներուն, վասն զի անոնք պիտի մխիթարուին» (Մատթ. 5:4):

Ոչ թէ «Երանի՛ սգաւորներուն, վասն զի անոնք բացատրութիւն պիտի ստանան»: Գէշ բաները բարի մարդկանց կը պատահին այնպիսի պատճառներով, որոնք մեր հասկացողութենէն վեր են:

Վաղ թէ ուշ ճգնաժամն ու ցաւը պիտի թակեն մեր կեանքը, եւ պիտի աղաղակենք ըսելով. «Եթէ Աստուած իսկապէս կը սիրէ զիս, ապա ինչպէ՞ս թոյլ տուաւ, որ սա տեղի ունենայ կեանքիս մէջ»: Դճնաժամի եւ ցաւի մէջ ընտրելու հնարատրութիւն ունիք: Ընտրութիւնը կ'ան զայրոյթով ու անհաւատութեամբ Աստուծմէ երես թեքելն է, կ'ան ըսելը. «Չնայած այն ամէնուն ինչ կեանքիս մէջ կը կատարուի հիմա, ես կը հաւատամ, որ Աստուած կը վերահսկէ, եւ որ Ան իսկապէս բարի է ու սիրով կը գործէ իմ օգուտիս համար: Ես կ'ընտրեմ Իրեն ենթարկուիլը, քան բացատրութիւններ պահանջելը»: Ենթարկութիւնն ընտրելը ձեր հոգեւոր կեանքի առանցքային շրջադարձային կէտն է: Այն Աստուծոյ հետ ձեր փոխյարաբերութիւնները նոր եւ աւելի խորը մակարդակի վրայ կը բերէ:

Հաւատացէ՛ք ձեր սրտին մէջ, որ հաւատքը անկախ է տրամաբանութենէն կամ մտքէն: Եթէ արդէն ունիք այս ճշմարտութիւնը ձեր սրտին մէջ, ապա տառապանքի կամ ճգնաժամի ժամանակ դուք աւելի հեշտ պիտի կարողանաք կառավարել իրավիճակը:

Ռէքս Տիրլավ



«Ես անոր վրայ յանցանք մը չեմ գտներ»

Պիղատոսը տրամադրութիւն չունէր հրեայ կառավարիչներուն ու գաժըր կատարելու: Ան ստիպուած էր դուրս գալ անոնց, քանի որ անոնք պալատը մտնելով չէին ուզէր «սլոթուիլ»: Վաղ առաւօտ էր, ան զայրացաւ, որ հրեաները իրեն կ'ուզէին պարզապէս օգտագործել:

Անոնք հաւանաբար ուշ երեկոյեան պատուիրակութիւն դրկեցին Պիղատոսի առանձնատուն՝ Յիսուսին ձերբակալելու ծրագրի մասին իրեն տեղեկացնելու եւ անոր համաձայնութիւնը ստանալու համար, որպէսզի Յիսուսին շուտ խաչը բարձրացնէ: Հրեաները կ'ակնկալէին Պիղատոսի համագործակցութիւնը:

«Ի՞նչ ամբաստանութիւն կը ներկայացնէք այս մարդուն դէմ» - պահանջեց ան:

Հրեաները անհամբեր ու զայրացած պատասխանեցին. «Եթէ ատիկա չարագործ մը չ'ըլլար, քեզի չէինք մատներ զանիկա»:

Պիղատոսը ոտքի կանգնեց ու պատասխանեց. «Դուք առէք զանիկա ու ձեր օրէնքին համեմատ անոր դատաստանը տեսէք»:

Հրեայ առաջնորդները քողարկուած զայրոյթով պատասխանեցին. «Մեզի օրինաւոր չէ մարդ մը մեռցնել»:

Պիղատոս նորէն պալատը մտաւ: Յիսուսին բերին իր առջեւ: Իր տուած առաջին հարցը նոյնքան տարօրինակ էր, որքան այն իրավիճակը, որու մէջ ան յայտնուած էր:

- «Դու՞ն ես Հրեաներուն թագաւորը»:

Յիսուսը ողջ գիշեր արթուն մնացած էր, զինք ծաղրած ու ծեծած էին հրեական ատեանի մէջ, բայց Իր պատասխանը հանգիստ ու անկեղծ էր. «Ատիկա դուն քեզմէ՞ կ'ըսես, թէ ինձի համար ուրիշներ քեզի ըսին»:

Պիղատոսը ջղայնացած էր այդքան պարզ, անմիջական եւ անձնական հարցի պատճառով: Արդեօ՞ք Ան իսկապէս կ'ուզէր զիտնալ, թէ ով է Յիսուսը, թէ՞ ասիկա պարզապէս օրինական հարցաքննութիւն էր:

«Մի՞թէ ես հրեայ եմ» - Պիղատոսը պատասխանեց, «Քու ազգդ եւ քահանայապետերը քեզ ինձի մատնեցին. ի՞նչ ըրած ես դուն»:

«Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ. եթէ այս աշխարհէն ըլլար իմ թագաւորութիւնս, իմ սպասաւորներս կը կռուէին՝ որ ես Հրեաներուն ձեռքը չմատնուիմ, բայց իմ թագաւորութիւնս ասկէ չէ» - պատասխանեց Յիսուսը:

Պիղատոսը լսեց իրեն ըսուածը: «Ուրեմն դուն թագաւոր մըն ես» - ըսաւ ան:

«Դուն կ'ըսես, քանզի թագաւոր եմ: Ես այս բանին համար ծնած եմ եւ ասոր համար աշխարհ եկած, որպէս զի ճշմարտութեան համար վկայեմ: Ամէն մարդ որ ճշմարտութենէն է՝ իմ ձայնիս ականջ կը դնէ»:

Ճշմարտութի՞ւն: Պիղատոսը զինուորական եւ քաղաքական գործիչ

էր: Ճշմարտութի՞ւն: Իր ճանչցած բոլոր մարդիկ սուտ խօսողներ են: Ոչ որ հետաքրքրուած չէր ճշմարտութեամբ, այլ միայն այն, ինչ լաւ էր իրենց համար: Ճշմարտութի՞ւն: Արդեօ՞ք այդպիսի բան կայ:

Ան գուցէ դառնօրէն հարցուց. «Ի՞նչ է ճշմարտութիւնը»: Եւ առանց պատասխանի սպասելու՝ վերադարձաւ անհանգիստ հրեայ կառավարիչներուն քով:

Ան հրասպարակեց իր դատավճիռը. «Ես յանցանք մը չեմ գտներ անոր վրայ»:

Սիրելի՛ ընթերցող, Անոր մէջ որեւէ յանցանք կը գտնե՞ս:

Պիղատոսը չորս անգամ յայտարարեց, որ Տէր Յիսուսն անմեղ է, ապա յանձնեց Իրեն, որ ծեծեն եւ խաչ բարձրացնեն:

Արդեօք դուն նոյնը կ'ընե՞ս: Դուն Անոր մէջ որեւէ յանցանք չես գտներ, բայց արդեօք մէջքդ դարձնելով կը հեռանա՞ս Իրմէ: Արդեօք կ'ըսե՞ս. «Ես այդ արդարին արհւնէն անպարտ եմ. դո՛ւք մտածեցէք»:

Յիսուսի մահը շատ ատելի էր, քան անմեղ մարդու դաւաճանութիւնը: Ան մեղքի համար Աստուծոյ որոշած զոհն էր, Ան իմ եւ ձեր մեղքի համար կրեց մահապատիժը: Ան յաւիտենական կեանքի տանող միակ ճանապարհն է:

Իսկապէս Անոր մէջ չկայ ոչ մէկ թերութիւն: Ան պատրաստ էր յանուն մեզ մեռնելու: Մեր մեղքն էր, որ զինք խաչը հանեց: Դուն չես կրրնար ձեռքերդ լուանալ ու ըսել, թէ բաժին չունիս: Դուն ներգրաւուած ես, եւ դուն կ'ամ պէտք է ապաշխարես, խոնարհիս Տէրոջը առջեւ եւ ընդունիս Իր ներման պարգեւը, կ'ամ պէտք է կանգնիս Աստուծոյ դատաստանին առջեւ, եւ քու մեղքերդ համար պատասխան տաս:

Ով մեղատրոնէ՛ր, փնտռէ՛ք Անոր շնորհքը,

Անոր բարկութեանը չէք կրնայ դիմանալ,

Դիմէ՛ք Անոր խաչին,

Եւ այնտեղ փրկութիւն պիտի գտնէք:

Նէյլ Պուքման

Ծառայութեան բաց դռներ

Քորոնավիրուսային հիւանդութիւնը փոխեց բոլորի ծրագիրները, սահմանափակեց մարդկային արդէն իսկ սահմանափակուած շփումը, այն փոխեց մարդկանց մտածելակերպը, մօտեցումները, հաստատիւքները:

2020 թ.-ի Մարտ ամիսէն սահմանափակուեցան նաեւ մեր հոգեւոր ծառայութիւնները: Ժամանակաւոր դադար ունեցան քրիստոնէական դաստիարակութեան խմբակները, չափահասներու հանդիպումներն ու Աստուածաշունչի սերտողութեան խմբակները, ծրագրուած միջոցառումներն ու հիւրերու այցը Հայաստան: Սակայն փառք Աստուծոյ, որ Ան աղօթքներ լսող ու պատասխանող Տէր է, եւ գիտէ մարդու ուրախացնել եւ ծառայութեան նոր դռներ բացելու ճիշտ օրն ու ժամանակը:

2021 թ.-ի ամարային ամիսները լի էր նոր փորձառութիւններով: Աստուծոյ օգնութեամբ եւ իմաստութեամբ Յունիս ամսին Խօրոնք եւ Մերձավան գիւղերուն մէջ կարողացանք կազմակերպել ու անցկացնել եռօրեայ ամարային միջոցառումներ մանուկներու համար, իսկ Յուլիսին՝ մէկօրեայ հանդիպումներ Տավուշի մարզի Հովք գիւղին մէջ, ինչպէս նաեւ Վանաձոր եւ Երեւան քաղաքներուն մէջ: Միջոցառումներուն մասնակցող մանուկներու եւ պատանիներու թիւը 245 էր:

Խօրոնք գիւղի ամարային միջոցառմանը մասնակցեց տիկին մը, որու ամուսինը Հայ Առաքելական եկեղեցիի սպասաւոր էր: Մենք ասոր մասին իմացանք վերջին օրը, երբ ան բարձրախօսը վերցուց եւ իր երախտիքի խօսքն ուղղեց մեր հիմնադրամի անձնակազմին, շնորհակալութիւն յայտնելով միջոցառման համար, յատկապէս շէշտելով Աստուծոյ Խօսքի ճշմարտութեան մատուցումը: Մեծ ուրախութիւն էր իր համար, որ իր զաւակները Աստուծոյ Խօսքի ճշմարտութիւնը լսեցին ու միմեանց հետ ճիշտ վարուեցողութեան մասին սորվեցան:


Թող Աստուած օգնէ իւրաքանչիւր մասնակից մանուկի, որպէսզի անոնք փոխուած կեանքով ապրին, Աստուծոյ սիրոյ մասին համարձակ պատմեն ու աճեն Անոր շնորհքի ու գիտութեան մէջ: Ինչպէս նաեւ աղօթենք մեր աշխատակիցներու, կամաւոր օգնականներու միաբանութեան համար, որ կարողանանք միասին շարունակել Տէրոջը ծառայել:

Միջոցառումներու աւարտին մանուկներուն նուիրեցինք քրիստոնէական դաստիարակութեանը նպաստող գրքոյկներ, ինչպէս նաեւ նուիրներ, որոնք մեր հիմնադրամի կողմէն ներկրուած էին: Շնորհակալ ենք Տէրոջը բեռնարկղի ծառայութեան համար:

Օրհնուած էին նաեւ կամաւոր օգնականները: Շատ ոգետրուած էին, որ կարողացան իրենց բաժինն ունենալ աւետարանչութեան մէջ: Ունէինք չորս կամաւոր օգնականներ: Անոնցմէ մէկը հովիւի աղջիկ էր, ով տարբեր միջոցառումներ ու բակային ճամբարներ վարելու երկար տարիներու փորձ ունէր: Սակայն մեծ էր մեր զարմանքը, երբ ան ըսաւ, թէ յատուկ էր իր օրհնութիւններն այս ընթացքին: Ան շատ նոր մօտեցումներ տրվեցաւ, որոնք կը ծրագրէ կիրառել իրենց եկեղեցական միջոցառումներուն ժամանակ:

2021 թ.-ի Յուլիսին Ամերիկայի Միացեալ Նահանգներէն ժամանեց երկար սպասուած միսիններական խումբը: Խումբը փոքր էր, ժամանակը քիչ, բայց շատ մեծ դեր ունեցաւ մեր ծառայութիւններու եւ մեր հովանաւորութեան տակ գտնուող կարիքաւոր ընտանիքներու կեանքին մէջ: Միասին անցուցած իրաքանչիւր օրը առիթ էր նորը տրվելու, Աստուծոյ աւելի ճանչնալու ու միմեանց բարի օրինակ ծառայելու համար: Ծրագրուած էին այցելութիւններ կարիքաւոր ընտանիքներուն, միսիններական աւետարանչութիւն թէ՛ Հայաստանի քաղաքացիներու համար, թէ՛ Արցախէն Հայաստան ապաստանած քաղաքացիներու համար, ինչպէս նաեւ մանկական հանդիպումներ: Կազմակերպուած հանդիպումներու ժամանակ կարիքաւոր ընտանիքներուն տրամադրեցինք նաեւ նիւթական աջակցութիւն: Թէ՛ մեծահասակները եւ թէ՛ փոքրիկները շատ ոգետրուած էին, ուրախ ու գնահատուած կը զգային իրենք իրենց, որ խումբի իրաքանչիւր անդամ անհատական մօտեցում կը ցուցաբերէր անոնցմէ իրաքանչիւրին նկատմամբ: Շնորհակալ էին, որ իրենց նիւթապէս օգնելէ բացի կ'օգնէին հոգետրապէս ու զգայապէս:

Իսկ Օգոստոսին մեր հիմնադրամի աշխատակիցներով եւ մեր խնամակալութեան տակ գտնուող կարիքաւոր ընտանիքներու մանուկներու հետ մասնակցեցինք «Մանկանց աւետարանչութեան ընկերակցութեան» կողմէ կազմակերպուած ճամբարին: Նշեն, որ ճամբարի վայրի համար երկար տարիներ ադօթած էինք, եւ Տէրը բարի պատաս-

A person wearing a white lab coat is seen from the side, looking out of a window. The window looks out onto a lush green forest with some trees showing autumn colors. The scene is brightly lit, suggesting a sunny day. The person's coat is white and appears to be a medical or professional uniform. The window frame is dark, and the view outside is clear and vibrant.

խան շնորհեց: Մանուկները լսեցին Աստուծոյ մասին ճշմարտութիւններ, սորվեցան Աստուածաշունչէն օգտուիլ եւ մենիկ պահ ունենալ Աստուծոյ հետ: Սորվեցան մարդկային որակներ, որոնք իրենց կ'ուղղորդեն ողջ կեանքի ընթացքին:

Մեր աղօթքն է, որ Աստուած շարունակէ օրհնել մեր ծառայութիւնները մեծահասակներու եւ փոքրերու հետ, օրհնէ Հայաստանը եւ այն մարդկանց ուրբեր կ'օժանդակեն ու կարեկից կ'ըլլան տկարին ու կարիքաւորին: Թող Աստուած օգնական ըլլայ մեզի, որ կարողանանք աւելի շատ այցեր կազմակերպել Հայաստան, կարողանանք աւելի շատ ծառայութիւններ կատարել մեծահասակներու եւ փոքրերու մէջ:

Աստուած օրհնէ բոլորիս:

Անժէլայ Յարութիւնեան